

1. Ինչպե՞ս կարող եմ մասնակցել ACT2WIN մրցույթին

Եթե արդեն Converse Mobile հավելվածի օգտատեր եք, ապա օգոստոսի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը ներառյալ կատարելով առնվազն մեկ «Վարկի մարում» գործարք Converse Mobile-ով՝ կստանաք անհատական կոդ, կմասնակցեք խաղարկությանը, որի ընթացքում կարող եք հաղթել Iphone 15:

2. Ո՞վ կարող է դառնալ մրցույթի մասնակից

Մրցույթին կարող են մասնակցել Converse Mobile օգտատեր հանդիսացող 18 տարին լրացած ֆիզիկական անձինք, ՀՀ ռեզիդենտ քաղաքացիները՝ բացառությամբ Կոնվերս Բանկի աշխատակիցների:

3. Ինչպե՞ս եմ ստանալու անհատական կոդը

Մրցույթի մասնակիցները անհատական կոդը ստանալու են Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեին կամ հեռախոսահամարին:

4. Կարո՞ղ եմ ստանալ մեկից ավելի անհատական կոդ

Մասնակիցը՝ անկախ վարկի մարման գործարքների քանակից, վարկի արժույթից և գումարից, մրցույթի շրջանակում կստանա մեկ անհատական կոդ:

5. Ինչպե՞ս և ե՞րբ են ամփոփվելու մրցույթի արդյունքները

Մրցույթի արդյունքներն ամփոփվելու են Բանկի պաշտոնական ֆեյսբուքյան էջում ուղիղ հեռարձակման միջոցով՝ 2023թ-ի հոկտեմբերի 16-25-ը ներառյալ ժամանակահատվածում:

6. Ինչպե՞ս են որոշվելու հաղթողները

Մրցույթում հաղթողները կորոշվեն Բանկի ֆեյսբուքյան էջում կայանալիք live խաղարկության ժամանակ՝ հաճախորդներին տրված անհատական կոդերից պատահականության սկզբունքով ընտրության միջոցով:

7. Եթե հնարավորություն չունենամ հետևել ուղիղ հեռարձակմանը, ինչպե՞ս եմ տեղեկանալու՝ հաղթել եմ թե՞ ոչ

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների անհատական կողերը կիրապարակվեն Բանկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում՝ մինչև 2023թ հոկտեմբերի 30-ը, Երևանի ժամանակով ժամը 23:59-ը:

8. Կարո՞ղ եմ մի քանի մրցանակ ստանալ

Յուրաքանչյուր մասնակից կարող է հաղթել միայն մեկ մրցանակ:

9. Կարո՞ղ եմ մրցանակը փոխարինել համարժեք գումարով

Հաղթող մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի տրամադրվում, մրցանակը չի փոխարինվում այլ նվերով:

10. Ինչպե՞ս եմ ստանալու մրցանակը

Մրցանակները ստանալու եք ամփոփիչ միջոցառման ժամանակ, որի անցկացման վայրի և ժամի մասին կտեղեկացնենք Բանկում գրանցված Ձեր էլեկտրոնային հասցեին ծանուցմամբ և/կամ հեռախոսազանգի/կամ SMS միջոցով:

11. Եթե չկարողանամ մասնակցել ամփոփիչ միջոցառմանը, ի՞նչ եղանակով կարող եմ ստանալ մրցանակս

Հաղթող մասնակցի՝ ամփոփիչ միջոցառմանը ներկա գտնվելու անհնարինության դեպքում ամփոփիչ միջոցառմանը կարող է մասնակցել լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով: Լիազորագիրը հնարավոր է տրամադրել թվային ճանապարհով՝ ՀԾ ինտերնետ բանկ համակարգի միջոցով կամ Converse Mobile հավելվածի Չաթ բաժնում:

12. Եթե iPhone 15-ը թողարկված չլինի, ապա ի՞նչ մրցանակով է այն փոխարինվելու

Եթե մինչև մրցույթի ավարտը՝ հոկտեմբերի 15-ն Apple ընկերությունը iPhone 15 թողարկած չլինի, կամ սմարթֆոնը հասանելի չլինի Հայաստանում պաշտոնական ներկայացուցիչների տեսականիում, ապա iPhone 15-ը կփոխարինվի iPhone 14 Pro սմարթֆոններով:

13. Եթե iPhone 15-ը թողարկված չլինի, ապա հնարավոր չի՞ լինի սպասել մինչև այդ սմարթֆոնի թողարկումը

Քանի որ Բանկը չի կարող կանխատեսել, թե երբ Apple ընկերությունը կթողարկի iPhone 15-ը, մրցանակը կփոխարինվի Apple ապրանքանիշի լավագույն սմարթֆոններից համարվող iPhone 14 Pro սմարթֆոններով:

14. Հնարավո՞ր է վարկի մարումը կատարել մասնաճյուղում և մասնակցել մրցույթին

Մասնաճյուղում կարող եք մարել վարկ, սակայն մրցույթին մասնակից դառնալու կարևորագույն պայմանն է վարկի մարումը Converse Mobile հավելվածի միջոցով:

15. Ո՞ր վարկատեսակներն է հնարավոր մարել Converse Mobile-ով “Վարկի մարում” ֆունկցիայով և մասնակցել ACT2WIN մրցույթին.

- Հիփոթեքային վարկեր
- Ավտովարկեր
- Սպառողական վարկեր
- Դրամական կամ պարտատոմսերով ապահովված վարկեր
- Ուսանողական վարկեր
- Ոսկու գրավով ապահովված վարկեր
- Անշարժ կամ շարժական գույքի գրավով ապահովված վարկեր

16. Ինչպե՞ս կապ պահպանել Բանկի հետ

Բանկի հետ կարող եք հաղորդակցվել հետևյալ պաշտոնական կապուղիներով.

- Հեռախոսահամար՝ +374 10 511211
- E-mail՝ info@conversebank.am
- WhatsApp՝ +374 95 511211
- Բանկի պաշտոնական սոցիալական էջեր

Եվս մեկ անգամ հիշեցնում ենք. պաշտպանե՛ք Ձեր բանկային տվյալները զեղծարարներից. մի՛ տրամադրեք Ձեր քարտի CVV կոդը, SMS-ով ուղարկվող մեկանգամյա օգտագործման (OTP) կոդը, Converse Mobile հավելվածի PIN կոդը, ինչպես նաև ցանկացած գործարքի մանրամասները:

Հարցերի կամ կասկածների դեպքում դիմե՛ք՝ ՄԻԱՅՆ մեր պաշտոնական էջին անձնական նամակ գրելով: Կապի մեջ լինենք: